ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/1

ք. Երևան <<26>> -փետրվար-- 2018թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Գ.Գաբրիելյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության Շնագիտական բաժնի (կենտրոն) շների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **14 625 000 (Տասնչորս միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք.Երևան, Ամիրյան-10
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011054013	Հ/Հ 220419600550000
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 37412736
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ
Ա.Սահակյան	Գ.Գաբրիելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«26» —փետրվար- 2018թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Կատարողը պետք է ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Հյուսիսային -6 հասցեում գտնվող շնագիտական բաժնին (կենտրոն) պատկանող թվով 21 հատ ծառայողական, հատուկ վարժեցված շներին ապահովի անհրաժեշտ սնունդով, դեղամիջոցներով, վարժեցման, խնամքի և պահպանման համար անհրաժեշտ պարագաներով, որոնց ընդհանուր նկարագրությունը ներկայացվում է ստորև՝

CPV-77411200/1

1. Վարժեցվող շների համար անհրաժեշտ սնունդ

1.1 <<PURINA DOG CHOW ACTIVE>> ֆիրմայի կամ համարժեք չոր կերի ապահովում պայմանագրի շրջանակներում 4 471 240գ,
1.2 << PURINA DOG CHOW PUPPY>> ֆիրմայի կամ համարժեք չոր կերի ապահովում պայմանագրի շրջանակներում 100կգ
1.3 << PURINA DOG CHOW LARGE BREED >> ֆիրմայի կամ համարժեք չոր կերի ապահովում պայմանագրի շրջանակներում 160կգ
1.4 Տավարի ոսկորոտ միս պայմանագրի շրջանակներում 1500 կգ

- Կատարողը պարտավոր է շների պահպանման համար վերը նշված սննդի մատակարարվելիք քանակները ապահովել ըստ Պատվիրատուի գրավոր պահանջագրի, որը կուղարկվի կատարողի էլ. փոստին՝ շնագիտական կենտրոնի մաքսային տեսուչի կողմից:

2. Վարժեցվող շների համար անհրաժեշտ դեղամիջոցների ապահովում

2.1 <<Պատվաստման միջոց /ՎԱՆԳԱՐԴ (VANGUARD+5L4)/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 45 չափաբաժին
2.2 <<Պատվաստման միջոց /ԲԻՈԿԱՆ (BIOKAN R)/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 40 չափաբաժին
2.3 <<Պատվաստման միջոց /ԳԻՍԿԱՆ(GISKAN 5)/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 30 սրվակ
2.4 <<Ճճվաթափության միջոցներ /ԱԶԻՆՈԿՍ+ />> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 200 հաբ
2.5 <<Ճճվաթափության միջոցներ /ԲՐՈՎԱՆՈԼ Մ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 60 հաբ
2.6 <<Մաշկային պարազիտների դեմ միջոցներ /ԲԱՐՍ (инсектициды BARS)/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 100 հատ
2.7 <<Իմունային համակարգ /ԳԱՄԱՎԻՏ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 հատ
2.8 <<Տեղային ցավազրկող միջոց ԼԻԴՈԿԱՅԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 տուփ
2.9 <<ՆԵՐԱՐԿՄԱՆ ՋՈՒՐ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 տուփ
2.10 <<Հակաբիոտիկ / ԼԵՆԴԱՑԻՆ 1գր./>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 50 հատ
2.11 <<Հակաբիոտիկ / ՖՈՐՏՈՒՄ 1գր./>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 40 հատ
2.12 <<Վիտամին B համալիր (VITAMIN B COMPLEX)>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 4 հատ

2.13 <<Վիտամին B 1 (VITAMIN B 1)>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 հատ
2.14 <<Վիտամին Տ / VITAMIN C/>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 3 տուփ
2.15 <<Ներքին արյունահոսությունը կանխող միջոց /ՎԻԿԱՍՈԼ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 4 տուփ
2.16 <<Ներքին արյունահոսությունը կանխող միջոց /ԴԻՑԻՆՈՆ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 տուփ
2.17 <<Հորմոնային միջոց /ԴԵՔՍԱՄԵՏԱԶՈՆ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 100 հատ
2.18 <<Հակաբորբոքային միջոց միզասեռական օրգանների համար /ՖՈՒՐԱԴՈՆԻՆ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 լիտր
2.19 << Պլազմա փոխարինող դեղամիջոց /Նատրիումի քլորիդ 250 մլ (Sodium chloride250ml)/>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 հատ
2.20 << Պլազմա փոխարինող դեղամիջոց /Նատրիումի քլորիդ 500մլ (Sodium chloride500ml)/>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 հատ
2.21 <<Էլեկտրոլիտ բալանսի վերականգման /Գլյուկոզա 40% />> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 3 տուփ
2.22 <<Ծննդաբերության խթանիչ /ՕՔՍԻՏՈՑԻՆ/ պայմանագրի շրջանակներում 1 անգամ 6 տուփ
2.23 << Սեքս Բարիեր/ ԿՕՀՏՐՍԵԿՀ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 տուփ
2.24 << Մկանային հակաբորբոքային քսուք /ԱԼԵԶԱՆ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 հատ

- Կատարողը պարտավոր է վերը նշված դեղամիջոցների մատակարարվելիք քանակները ապահովել ըստ Պատվիրատուի գրավոր պահանջագրի, որը կուղարկվի կատարողի էլ. փոստին շնագիտական կենտրոնի մաքսային տեսուչի կողմից: Դեղամիջոցների պիտանիության ժամկետները Պատվիրատուին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝

  ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

  բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

  գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

3. Վարժեցվող շների համար անհրաժեշտ բուժ. պարագաների ապահովում

3.1 <<Բժշկական ձեռնոց>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 7 տուփ
3.2 <<Բժշկական բինտ ոչ ստերիլ (16սմ*10մ)>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 50 հատ
3.3 <<Բժշկական լեյկոպլաստ (4սմ*500սմ)>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 30 հատ
3.4 <<Բժշկական անձեռոցիկ ստերիլ (16սմ*14սմ)>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 50 հատ
3.5 <<Բժշկական բամբակ ոչ ստերիլ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 հատ
3.6 <<Ներարկիչներ (3 մլ)>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 400 հատ

3.7 <<Ներարկիչներ (5 մլ)>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 400 հատ
3.8 <<Երակային կատետր 22G>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 30 հատ
3.9 <<Բժշկական ժգուտ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 3 հատ
3.10 <<Երիկամաձև մետաղյա թասիկ մեծ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.11 <<Երիկամաձև մետաղյա թասիկ միջին>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.12 <<Վիրաբուժական սեղմիչ չ/մ /ԿՈՐՆՑԱՆԳ/>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.13 <<Վիրաբուժական սեղմիչ չ/մ ԿՈԽԱ/>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 6 հատ
3.14 <<Ատամնավոր վիրաբուժական սեղմիչ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 հատ
3.15 <<Վիրաբուժական ասեղաբռնիչ չ/մ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.16 <<Բժշկական մկրատ չ/մ 14.5 սմ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.17 <<Բժշկական մկրատ չ/մ 18սմ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.18 <<Բժշկական ատամնավոր պինցետ չ/մ 15սմ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.19 <<Բժշկական պինցետ չ/մ 15 սմ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.20 <<Բժշկական պինցետ չ/մ 20 սմ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.21 <<Վիրաբուժական վերքալայնիչ չ/մ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.22 <<Վիրաբուժական ցապկա չ/մ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 6 հատ
3.23 <<Լանցետաբռնիչ չ/մ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ
3.24 <<Լանցետի ստերիլ սայրեր N10>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 50 հատ
3.25 <<Մաշկային հիվանդությունների հայտնաբերման միջոց Լամպ /ВУДА/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 հատ

- Կատարողը պարտավոր է շների պահպանման համար վերը նշված ապրանքների մատակարարվելիք քանակները ապահովել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում :

4. Վարժեցվող շների վարժեցման, խնամքի և պահպանման համար անհրաժեշտ պարագաների ապահովում

4.1 <<Հակապարազիտային շամպուն շների համար /ПУГОВОЙ/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 հատ
4.2 <<Վզկապ /Hunter Vario-Basic AIU-Strong/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ -20 հատ
4.3 <<Շնաթոկը /Hunter Vario-Basic/>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ -40 հատ
4.4 <<Խաղալիք գնդակ>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ -40 հատ
4.5 <<Ման կերի և ջրի համար>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ -30 հատ
4.6 <<Շների համար անձնագրեր>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ -20 հատ

4.7 <<Շնագիտական բաժնի /կենտրոնի/ համար թմրանյութերի հոտային նմանակման հավաքածու N8MO>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ -3 հատ

4.8 <<Շնագիտական բաժնի /կենտրոնի/ համար <<Էքսպրես թեստ CPV+CCV>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ -5 հատ

4.9 <<Շնագիտական բաժնի /կենտրոնի/ համար <<Էքսպրես թեստ HB>> (դաշտային պայմաններում թմրամիջոցների հետազոտման կանխարգելիչ միջոց) կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ -20 տուփ

4.10 <<Շնագիտական բաժնի /կենտրոնի/ համար Զենք, զինամթերքի հոտային նմանակման հավաքածու>>- պայմանագրի շրջանակներում 1 անգամ -2 տուփ

4.11 <<Շնագիտական բաժնի /կենտրոնի/ համար Սփրեյ (դաշտային պայմաններում պայթուցիկ նյութերի հայտնաբերման կանխարգելիչ միջոց) <<BB-2>> <<BB-3>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ -3 հատ

- Կատարողը պարտավոր է շների պահպանման համար վերը նշված ապրանքների մատակարարվելիք քանակները ապահովել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում :

Ծառայության մատուցման ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք.Երևան, Ամիրյան-10
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011054013	Հ/Հ 220419600550000
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 37412736
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	«Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ
Ա.Սահակյան	Գ.Գաբրիելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«26» -փետրվար-- 2018 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը	Ընդամենը
1	77411200/1	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության Շնագիտական բաժնի (կենտրոն) շների պահպանման ծառայություններ			1 462 500	2 925 000	4 387 500	5 850 000	7 312 500	8 775 000	10 237 500	11 700 000	13 162 500	14 625 000	**14 625 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ
ք.Երևան, Ամիրյան-10
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220419600550000
ՀՎՀՀ 37412736
«Գաբրիել Գաբրիելյան» Ա/Ձ

Գ.Գաբրիելյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«26» [illegible] 2018 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ՝ «____» «_____» 20 թ. դուրս գրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«26» վեցերորդ 2018 թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն